ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2011թ. ապրիլի 27-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի գիտական հաղորդումը (զեկ.՝ ի.գ.թ., դոցենտ Ա. Մարգարյան):

Ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Ա. Մարգարյանը ներկայացրեց «Անչափահասների հանցավորության հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ գիտական հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ներկայացված գիտական հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Տ. Բարսեղյան) :

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Մարգարյանը, Ա. Իսկոյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ՈՒԳԸ կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ՈՒԳԸ կատարած աշխատանքը գնահատել դրական:

4. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

Հ. Խաչիկյանը ներկայացրեց 2010-2011 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2010-2011 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփման հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

5.1. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Կարեն Գևորգյանին թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու իրավունք տալու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Հ. Խաչիկյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև այն, որ Կարեն Գևորգյանը 2005 թվականին թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո մշտապես զբաղվում է գիտական գործունեությամբ, հեղինակ է 1 մենագրության, 1 ուսումնական և 4 ուսումնամեթոդական ձեռնարկների, 8 գիտական հոդվածների,

միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին՝ Կարեն Գևորգյանին տալ ԺԲ. 00.06 շիֆրով - (Միջազգային իրավունք) թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք:

5.2. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դասախոս Հայկ Մարտիրոսյանի «Նախաքննության մարմինների պատմական զարգացումը Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Կ. Գևորգյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

5.3. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դասախոս Սերգեյ Քոչարյանի «Իրավաբանական տեխնիկայի հիմունքներ» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Կ. Գևորգյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

5.4. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Տիգրան Սիմոնյանի «Молодежная преступность в Республике Армения» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Կ. Գևորգյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

5.5. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ Հրաչիկ Ջիլավյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը. Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Հրաչիկ Ջիլավյանի «Քաղաքացիների առողջությանը պատճառված վնասի հատուցումը ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ» վերտառությամբ ատենախոսության թեման, շիֆրը ԺԲ. 00.03 - «Քաղաքացիական իրավունք, առևտրային (կոմերցիոն) իրավունք, միջազգային մասնավոր իրավունք, ընտանեկան իրավունք, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Հրաչիկ Ջիլավյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ., դոցենտ Գ. Բեքմեզյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*